

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 Ֆր.

Վեցամսեայ 6 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիւր միկ ծրարով

Տարեկան . . . 14 Ֆր.

Վեցամսեայ . . . 7 Ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոյար

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԽԻԿ

Մանուշակաւ տողը
20 տակնիւ

ՀԱՍՏԻ

Rédaction du journal

„Iraouunk“

VARNA (Bulgarie)


Редакция

на ВѢСТНИКЪ

„ІРАВУНК“

ВАРНА

Գրութիւնք եւ չին
տրոշիր



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇՈՒԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՈՐՆԵ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ

ԲԱՂԱԲԱՍՆՈՒԹԻՒՆԸ

—*—*—*—

Այս հարցումին պատասխանը
գտնելու համար որո՞ւ կամ ո՞ւր
գիտնելու է :

Անշուշտ հասկանալի է թէ «մեր
ազգային» քաղաքականութիւնը՝
ըսելով կը հասկնանք մեր ազ-
գային նպատակին հասնելու եւ
անոր ծառայելու ուղիղ ճամբան:
Այդ ճամբան ո՞վ ցոյց կուտայ
հայ ժողովուրդին: Յեղափոխու-
թիւնը, եթէ պատասխանուի, ան-
միջապէս խնդիր կը ծագի, թէ
ո՞ր կերպ յեղափոխութիւնը եւ
հոս կարծիքի բաժանումը կը տիրէ:
Իրարու հակառակ, զիրար խաչա-
ձեռող շաւիղներ ցոյց կը տրուին:
Եղափոխութեան կարապետող
տարբեր տարբեր օւկաններ ու
քարոզիչներ իրենք իրենց մէջ
կը հակասեն, այնպէս որ տարի-
ներէ ի վեր յեղափոխութեան
նուիրուած անձեր ու խմբակներ
շուարուն վիճակ մը ու շփոթ
գիրք մը կստանան օրէ օր: Տաս-
նեակ տարիներ առաջ թըքահայ
Դատին համար կազմակերպուած
խումբեր այսօր զայն կը լքեն
եւ ուրիշ նպատակի մը ծառայել
կելլեն միշտ հայ յեղափոխակա-
նի չգարով: Ուրիշներ տարիներ
առաջ իրենց կեանքը ու գոյու-
թիւնը հայ յեղափոխութեան տը-
րամագրելի ըրած ու իրենց ան-
ձին վրայ զոհարարութեան որոշ
օրինակներ տուած ըլլալով հան-
գերծ, այսօր կը դառնան, կը մա-
քառին նոյն դրօշին դրօշակա-
կիրներուն դէմ: Հատեր եւ յայտ-
տի կազմակերպութիւններ թըք-
քահայ Դատը Կովկաս կը փոխա-
դրեն, թշնամիներու թիւը ա-
ւելցնելով եւ մերթ մեր դրացի-
ները՝ որոնց բարեկամութեան
պէտք ունինք, թշնամացնելով:
Եւ ասոնց ամէնը հայ յեղափո-
խութեան անունով է որ կը խօ-
սին ու կը գործեն զիրար թըշ-
նամանելով եւ իրարու հակասե-
լով:

Այս քառասուն վիճակին մէջ
դեռ կը սպասուի որ բոլոր հա-
յութիւնը ուժ տայ հայ յեղափո-
խութեան, բայց յեղափոխութեան
ո՞ր ձևին, ո՞ր ճամբային, ո՞ր
խումբին: Ազգին ահագին մեծա-
մասնութեան յեղափոխութենէ
հեռու մնալուն համար կուսակցա-
կան օւկաններու մէջ հայտնաբ-
ններ կը թափուին հայ ժողովուր-
դի գլխուն: Թէեւ աւելի ծանր ու
խիստ լուտանքներ անոնք իրարու
գլխու ալ կը տեղացնեն: Սակայն
առաւել քան տասը տարիներէ
ի վեր տեսնուեցաւ թէ ոչ այդ մի-
ջոցները եւ ոչ ալ բազմապատկո-
ւող աղէտները կարող կըլլան
հայ յեղափոխութիւնը ուժով ցը-
նելու եւ կազմակերպութիւնները
իրարու մօտեցնելու, այլ ընդ-
հակառակը ներքին պառակտում-
ները աւելի կը բազմանան:

Այլեւս պէտք է սթափուիլ եւ
հարցնել թէ ո՞ւր պիտի երթայ
ասոր վերջը: Այս իրարու հակա-
սող ճամբաներով ու քաղաքա-
կանութեամբ ոչ թէ միայն չէ
կուրելի մեր ազգային նպատա-
կին հասնել, այլ ընդհակառակը
մեր ազգային Գոյութիւնն ալ
վրայ տալու ահել վտանգը օր
բոտ օրէ կը ծառանայ մեր առ-
ջեւ:

Մեզ սարսափ ներշնչող այս
վտանգը ազգային ընդհանուր
ուժով դիմագրաւելու եւ անհետա-
ցնելու համար, ազգին «յեղա-
փոխական փոքրամասնութեան»
կողմէ թափուած հակասական ճի-
գերու անբաւականութեանը խո-
րապէս համոզուած ըլլալով էր,
որ քանի մը յօդուածներով շեշ-
տած էինք Համահայկական Համա-
ժողովի մը պէտքը, եւ վերջին
անգամ ուշադրութիւնը հրաւե-
րած Ամենայն Հայոց Կաթողի-
կոսին, որ նախաձեռնութիւնը
ստանձնէ Համաժողով մը հրա-
ւիրելու, հոն գծելու համար մեր
ազգովին հետեւելիք Ազգային
Քաղաքականութիւնը:

Գտնուեցան կուսակցական
պաշտօնակիցներ մեզ ըսելու որ
հրապարակաւ ըսենք թէ ինչ
պէտք է ըլլայ մեր ազգային

քաղաքականութիւնը: Մենք,
ինչպէս մեզ պէս ուրիշներ, հա-
ւակնութիւնը թէեւ չունինք
անսխալ եւ անքննադատելի ազ-
գային քաղաքականութիւն մը
գծելու իր ամէն նուրը կողմե-
րովը, եթէ այդչափ հաւակնու-
թիւ ըլլայինք, շատ անխոհեմ
քայլ մը առած պիտի լինէինք,
կը կարծենք, ազգային ներքին
գաղտնիք ըլլալու բնոյթն ունե-
նալիք ծրագիրներ հրապարակի
նիւթ ընելով:

Խղճամիտ կերպով վարուած
պիտի ըլլան մեր կուսակցական
պաշտօնակիցները, եթէ քիչ մը
ներող ըլլան որ իրենց խումբին
չպատկանող հայ հայրենասէր
ալ ազգային դատին ի նպաստ
բան մը խորհին, բանի մը ձեռ-
նարկեն, եւ այդ կուսակցականնե-
րը ազգասիրութիւնը միայն
իրենց քաթէնք եղած չը կարծեն:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

ՇՈՒՇԻ Ի Առաջնորդը Մարտ
29 ին հետեւեալ հեռագիրը տո-
ւած է Տփլիսի:

Ամէն օր եւ անընդհատ գալիս են
քաղաք հայոց զիւղերից խորը խոցո-
տուած եւ տնանկացած հայեր, որոնք
հալկորդում են սոսկալի տեղեկութիւն-
ներ կազակների ձեռքով կատարուող
բարբարոսութիւնների, խստութիւն-
ների հալածանքների, ծեծի եւ կա-
նանց բռնաբարութիւնների մասին, ո-
րոնք կատարուում են գաւառապետի,
հաշտարար—միջնորդ երմուլանի աջի
առաջ, ցուրտ ձմրան, ցիւխն եւ անձ-
րեւին, երկիւղ կրելով կազակների գա-
լուց, ապաստանում են լեռներն,
անտառներն եւ ժայռերի ծերպերը:
Բնակչութիւնը մահը նախապատիւ է
համարում, չկարողանալով տանել
մարդկային ինքնասիրութիւնը մեռ-
ցնող անպատուութիւնը: Կազակները
մորեխի նման ոչնչացնում են ար-
տերը, ինչպէս նաեւ զիւղացիներ
ամբողջ ստացուածքը, կազակները յա-
փառելու են, հրդեհում են հայերի
կայքերը, որոնք ձեռք են բերուած ճա-
կատի քրտինքով, ամբողջ դարերի
ընթացքում, կարողութեան տէր մար-
դիկ այսօր գլուխ դնելու տեղ եւ
ուտելու մի կտոր հաց չունեն եւ

մնացել են մերկ: Որքու աչքի առաջ
մօրը բռնաբարոււմ են, եղբոր առաջ՝
քրոջը եւ երբ որդին ուզել է մօրը
պաշտպանել, կազակները նրան ախ-
քան տանջել են, որ երեք ժամից յե-
տոյ հոգին աւանդել է: Այս գիւղե-
րում որոնք պաշտպանուել ու յետ
էին մղել թուրք աւագակաթմերի
յարձակումները, առհասարակ, ամեն
տեղ ամեն ինչ կողոպտուած, յափշտա-
կուած է: Հայերը կորցրել են իրենց
պատիւը, հացեղէնի պաշարը, հագուս-
տեղէնը, տնային կահ կարասիքն եւ
արդուղարը: Այս բոլոր անցքերը յի-
շեցնում են Սուլթանի կառավարու-
թիւնը: Հայերի դրութիւնը անտանելի
է: Հաւատացած ենք որ Մեծ Կայսրը
եւ բարի ու գթասիրտ փոխարքան ժառ-
նաւոր ուշադրութիւն կը դարձնեն:
Թախանձագին խնդրում եմ շտապեցնել
փոխարքայի կարգադրութիւնը՝ վերջ
տալու համար հայ գիւղերի աւերում-
ներին:

ԱՇՈՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Փոխարքային ներկայացող հայ
պատգամաւորներու պահանջին
համաձայն, խառն քննիչ յանձ-
նախումբ մը Տփլիսէն մեկնած է
Շուշի, այս գաւառի հայ գիւղե-
րուն մէջ խաղախներու գործած
վայրագութիւնները քննելու
պաշտօնով: Քննութեան համար
Փոխարքային տուած հրահանգ-
ները, ինչպէս կը հաւաստեն կով-
կասեան թերթերը բաւական կըտ-
րուկ եւ ազդու են, եթէ կեղծ չեն,
որ այլեւս տարակուսելի է, մինչեւ
որ այդ հրահանգներուն գործ-
նական արդիւնքը տեսնուի:
Շուշիի կառավարիչը զինուորա-
կան հրամանատարը եւ խաղաղա-
բար միջնորդ կոչուող պիտի հե-
ռացուին քննութեան ատեն: Եւ
դատի պիտի ենթարկուին:

—Տփլիսի նպաստամատոյց Յանձ-
նախումբը մասնագէտներ զրկեր
է Գանձակ նահանգի հայ աղէ-
տաւորներուն վիճակը քննելու,
պէտքերը ուսումնասիրելու եւ օգ-
նութեան միջոցներ մշակելու նը-
պատակաւ:

—Հայ թերթերը իրաւամբ ցաւ
կը յայտնեն թէ հայ բժիշկներէն
մէկը չը գտնուեցաւ որ նպաս-
տամատոյց Յանձնաժողովի հրա-
ւերին համակերպէր, վնասուած
գիւղերը երթալու վերաւորները
եւ սարսափով հիւանդացողները

վարմանն իւր համար : Յանձնա-
ժողովը մտադիր է եղբոր օտարազ-
գի բժիշկներու դիմելու, տալով
անոնց օգնական և թարգման հայ
ուսանողներ :

—Շուշու գաւառի Ղուզէյ և
ձարտար գիւղերու բնակիչները
հեռագրով դիմեր են փոխարքա-
յին, հաղորդելով իրենց գիւղե-
րուն հասած սարսափելի աղէտ-
ները :

—Շուշիէն Կալկազ թերթին
հաղորդուած է այսպէս .

Շուշի . — Այստեղ գտնուող թու-
ցիկ զօրախումբը : Վեպերն փոխ. գըն-
դապետի առաջնորդութեամբ մարտի 19
եւ 20-ից զօրեղ թնդանօթաճգութեամբ
պատժի ենթարկեց թաղ եւ Տող Հայ
գիւղերը այն պատճառով, որ այդ գիւ-
ղացիք յունւարի 15-ին յարձակուել է-
ին Ղազար թուրք գիւղի վրայ եւ հը-
րացան կրակել կողակներէ իրայ :

Թաղի գիւղի վրայ արձակուեց 6
ռուս . այնուհետեւ բնակիչներէց
վերցրին 2030 ու 9 բերդան, 11 ասեղ-
նաւոր հրացան, փամփուշտներ եւ տա-
րան տաւարի մի մասը :

Տող գիւղի վրայ արձակուած է թըն-
դանօթի 20 ռուս . գիւղացիներէց
առնուած է 900 ու 10 բերդան , 14
չախմախի հրացան : Այդ գիւղում խու-
զարկութեան միջոցին գտնուած է մեծ
քանակութեամբ վարդ որով օդն է
է ցնդեցրած կօծիտէի անդամի տուեր-
նոյն այդ տանը գտնուած են փամփուշտ-
ներ :

Սուրալիս հայ գիւղում գտնուած է
մի բերդան, մի ասեղնաւոր եւ մի քա-
նի չախմախի հրացան :

Ռմարակոծութեան ժամանակ մարդկա-
յին զոհեր չեն եղել :

ԲԱՂԱԲԱԿԱՆ

ԱԼԺԵՉԻՐԱՍԷՆ ՅԵՏՈՅ

Յիրուի Գերմանիոյ կայսրը սո-
վորական մահկանացու մը չէ, կար-

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

ՊԱՐԻՊ ԱԽՊԵՐ...

(Շար. նախորդ թիւէն)

Ք.

—Հիմակ ի՞նչ որ է ... գոնէ կրնամ
կերպով մը համաձայնիլ. բայց լսածիս
նայելով՝ նշանուած ես եղեր ... :

—Ամբէ մը պիտի ամուսնանամ ու
պիտի մեկնիմ, նկատել տուաւ Ասլան :
—Անմիջապէ՞ս :

—Է՛հ, ստոր պէս բան մը ... շատ
չպիտի սպասեմ :

—Ամենէն լաւն այդ է ... խնդիրն
պատժելը չը կորսնցնելու վրայ է : Աս-
տուած ողջութիւն՝ տայ, երբ պարտքդ
վճարես ու վերադառնաս, կարող ես
ընտանիքիդ սէրը վայելել : Ուրիշ
կերպով հանգիստ չես ըլլար ... :

Երբ վանեց Գարբէլ Աղան պահ մը
լռեց ու սկսաւ մտածել : Անոր չոր ու
եպիւրի զանգուածով մը լեցուն գան-
կին տակ գաղափար մը մխրկտաց ու
յանկարծ կերպարանքը մթնոլորտ
Ասլան չը կուսնց այդ ահաւոր այլայ-
լուծութիւնն, որ պատկերուեցաւ իր րո-
վանդակ ապակնաութեամբը, այդ պատ-

ծեմ թէ վաթսուն միլիոն բնակիչնե-
րու իշխող լինելը իր ներշնչեալ
անձնաւորութեան համար եթէ նուա-
սացուցիչ չէ, գոնէ պատուաւոր էլ չէ.
չը բաւեր իրեն իր ընդարձակ տէրու-
թեան սահմաններուն մէջ ա՛յն բա-
նի մէջ քիթ խօթելը, այլ ա՛ն կուզէ
անպատճառ իրեն վրայ խօսեցնել ամ-
բողջ աշխարհը, եւ եթէ իրմով չզրա-
դին, ա՛ն միշտ միջոց ու պատրուակ կը
գտնէ իր վրայ զարցուցնելու աշխար-
հի ուշադրութիւնը . այս միջոցները
կրբեմն գաւառական են բայց միշտ
ողբերգութեամբ կը լնան : օրինակ-
ները բազմաթիւ են, իր անհանգստ
բնութեամբը շատ նեղ գրութեան մէջ
կը դնէ իւր կառավարութիւնը որոյ
ամբողջ գործունէութիւնը, իրեն
վնասփառ տիրոջ յախուռն արարքնե-
րուն հետեւանքները կամ դարմանե-
լու եւ կամ գոնէ մեղմելու մէջ կը
կայանայ :

Ասոնց ամէնէն թարմը Ալթէզիրասի
խորհրդաժողովի գէպէն էր . ուրկէ
Գերմանիան չը կրցաւ պատուաւոր
կերպով դուրս գալ .

Այսօր աշնորէն ամենուն ուշադրու-
թիւնը իւր երկու հռչակաւոր հեռա-
գիրներուն շուրջը կը դառնայ, մին
զոր ուղղեց ա՛ն աւստրիական ար-
քունքը, իսկ միւսը օր չը զրկեց ի-
տալիոյ թագաւորին, առաջին հեռա-
գրով, թէ պէտ մի քիչ բռնազրօսիկ. իր
չնորհակալութիւնը կը յայտնէր կու-
լուխովքի կոմսին Ալթէզիրասի մէջ
գերման պատգամաւորներուն ցոյց
տրուած աջակցութեան համար, իսկ
երկրորդը պարտ էր յղել իտալիոյ
թագաւորին ցաւակցութիւն յայտնելու
համար վէսուլի պատճառած վերջին
գժեղագրութեանց առթիւ : Իւր լու-
թիւնը տեսակ մը յանդիմանական
չեշտ ունի . իտալիոյ իւր զինակցին
Ալթէզիրասի ժողովին մէջ սկսնայտ
Ֆրանսասիրտութեան համար քննար-
կութեան ըրած տղու մը պէս կայրը չը
կրցաւ գոնէ իր անզուսպ բնաւորութիւնը
գժեղադրարկական հանդէպ մի քանի
ցաւակցական չոր ու ցամաք ֆրազ-
ներով արտայայտելու մէջ սքողել,
ասով աւելի եւս լայնցնելով հակա-
կրութեան խրամատը որ արդէն չա-

ճառաւ հարցոյց .

—Փոխանակագիրը այսօր պիտի չի-
նուի :

—Հարկա՛ւ ... դիտել տուաւ վաշ-
խառուն ծանր ու նենգ ձայնով մը :
Բայց պէ՛տք է հայրդ ներկայ ըլլայ :

—Ի՞նչու համար :

—Որ ստորադրէ :

—Ի՞մ ստորագրութիւնս չը բաւե՞ր :

—Ա՛հնա, ի՛նչ :

—Պատճա՛ռը :

—Պատճառը պարզ է . դուն կեան-
քէդ գտաւ բան մ'ունի՞ս :

—Ձու՛նք :

—Խիստ լա՛ւ . եթէ վաղը ինչա՛ս
միտնելու ըլլաս, ո՞վ պիտի վճարէ քու
պարտքդ : Ձե՛ որ հայրդ կրնայ չը
ճանչնալ : Ըսէ՛, իրաւունք ունի՞մ այս
առարկութիւնն ընելու :

—Իրաւացի՛ էք ... զողողաց Ասլան
որ հազիւ կարողացաւ իր անզուսպ
բարկութիւնը կոկորդին մէջ խղզել :

—Ուրեմն դ՛նա՛ գիւղը, յայտնէ հօրդ
ու միասին եկէ՛ք որ փոխանակագիրը
չի՛նուի :

Ասլան զողողալով դուրս ելաւ Եր-
վանէնց Գարբէլ Աղայի գրասենեակէն
ու արագ արագ գիւղը վերադառնաւ :
Հետեւեալ օրը Ռէս Մուրատ ու ինքը
դարձաւ վաշխառուն ներկայացան :
—Չպիտի ընդունէի ... բայց սրտիս

տոնց ի վեր, իտալիոյ ճշմարիտ հայրե-
նասէրներ եւ քաղաքագէտները բացած
էին երկու տէրութեանց մէջ : Ծիշդ
է թէ իտալիա այս գիւնակցութենէն
որուն մէջ ինք ձախ եւ անպէտ փլանկիլ
կը կազմէր, բան մը տուած չէր :
Բայց բան մըն ալ չահած չէր :

Կարգը կուգար հիմայ Ֆրանսայի .
պէտք էր ռազմական դիրքը փոխել
եւ ուրիշ կողմէ յարձակիլ անոր վը-
րայ. եւ ահա քաղաքը Սիամի խնդիրը
կը նետէ քաղաքական աշխարհի
առջեւ . այս անգամ խաղը շատ փոք-
ձիւ է, ա՛ն կրնայ այս անգամ Ֆը-
րանսայի համբերութիւնը սպառել ա՛ն-
գամ մըն ալ վտանգի ենթարկելով
եւ րոպայի խաղաղութիւնը : Սիամը
կրնանկախ թագաւորութիւն մըն է
հեռաւոր արեւելքի մէջ Ֆրանսա-
կան Բամպոնի եւ Փօնկայի սահմա-
նակից . Ֆրանսան մինչեւ հիմայ
Սիամը հովանաւոր տէրութիւնը կը
նկատուէր . գերման քաղաքականու-
թիւնը այժմ առաջնութիւնը կը ջանայ
կորզել Ֆրանսայի ձեռքէն . ասոր
զօրավիդ կըլլայ նաեւ Սիամի ներկայ
իշխող Չուլուսեթթ թագաւորը :
Ֆրանսիոյ առաջին յաջողութիւնը ե-
ղաւ հոն բանալ 12 միլիոն Ֆրանքով
սղգային դրամատուն մը գերման
զրաւագրութիւն հակառակ Ֆրանսայի
եւ Անգլիոյ կորովի բողբոքներուն
Պանթօլի մայրաքաղաքի մէջ, ուր
Ֆրանսայի դեսպանը տեսակ մը քոմի-
սէր կը նկատուէր. նաեւ հոն զրկուած
են բարձրաստիճան զինուորականներ
պաշտօն ունենալով կազմակերպ'լ
Սեմական բանակը որ ի խաղաղու-
թեան 50 հազար, իսկ պատերազմի
ժամանակ 250 հազար կրթեալ զօրքէ
պիտի բարձրանայ, այսպէսով վտանգ
օպառնալով Ֆրանսական տիրապետու-
թեան այդ կողմերը :

Այս կացութեան ելքը նախատես-
լու համար մարգարէ ըլլալու հարկ
չկայ, անգուսպները՝ ինչ տեսակ ալ
ըլլան անոնք՝ նկատուած են վտանգա-
ւոր, իրենց յախուռն արարքները յը-
ղացուցած են միշտ զանոնք պատե-
լու զաղափարը, եւ այս բարի դիտա-
ւորութիւնը միշտ յաջող ելք ունե-
ցած է թէ հին եւ թէ՛ նոր ժամանակ-

մէջ տեղ ունենալուդ, հարկադրուեցայ
ընդունիլ ... ըսաւ Երվանէնց Գար-
բէլ Աղան իր յատուկ կեղծաւորութեամ-
բը : Հաւատայ որ շատ ու շատ օպա-
սեցի . Ռէս Մուրատ :

Երբեմնին, որ խղղուած էր հոգեկան
զանն ու կսկծայի վիշտերու ներքեւ
ու չէր կրնար լեզուն շարժիլ, գլու-
խը կուրծքին վրայ կախեց ու խոր հա-
ռաչանք մը անեց բերնէն :

—Մարդ Աստուծոյ, դո՛ւն ալ ...
դիտել տուաւ վաշխառուն, որ կուսնց
Ռէս Մուրատի սիրտին ցաւը : Մինակ
քու գաւաղդ չէ այդ ճամբան ինկողը ...
Ի՛նչ ընես ... աշխարհքս ասանկ է ...
ամեն տառապանքներու զիմագրելով
պիտի կրնանք նպատակնուս հասնիլ :

Ռէս Մուրատ հաւկացաւ այս քստ-
մնելի հեգնութեան իմաստը . բայց չը
կրցաւ պատասխանել . որովհետեւ ա՛յն
անգունգին եզրը կը գտնուէր ուր ա-
նողքը թշուառութիւնը կեցած էր :
Օ՛հ, իր վաղեմի ու ասպնջական բարե-
կամը գտած էր անոր սրտին մէջ, է՛ն
խորունկ տեղը, արիւննոտ վէրք մը
ու կը խոցոտէր զայն :

—Իրաւունք ունի՛ք, Գարբէլ Աղա՛,
ըսաւ Ռէս Մուրատ՝ երկար ու ցաւա-
տանջ մտածուած մ'ետքը : Աշխարհքս
ասանկ է ... անի մը ունի ու ան կը
դառնայ : Ի՛նչ ընեմ, ճակատագիրս է,
պիտի քաշեմ :

ներու մէջ, իսկ ներկայ պարագայի
մէջ, ինչպէս կերեւայ, մարդկութիւնը
քիչ մը սուղ պիտի գնէ իւր անդոր-
րութիւնը :

Յ. Հ.

ԱՄԵՐԻԿԱ ԵՒ ՀԱՅԵՐԸ

ՀԱՅԱՆՊԱՍՏ ԵԱՐԺՈՒՄԸ

Մարտ 26-ին Ֆիլադելֆիա գումար-
ուեցաւ Մէթոտիստներու տարեկան
համաժողովը, որ Հայաստանի ջար-
գերու եւ արիւնահեղութիւններու
դէմ իր բողոքը հաղորդեց նախագահ
Րուզվէլթին : Ամբողջ ժողովը յոտնկայս
եւ միաձայն հաւանութեամբ ընդունեց
Պատ. Ճ. Հ. Պիքլիի հետեւեալ որոշու-
մը .

«Միացեալ Նահանգներու Նախագա-
հին

«Նկատելով թուրքիոյ Սուլթանին,
Բիւրտերու եւ Թաթարներու կողմէն
Հայաստանի եւ կովկասի Հայերուն
տրուած շարունակական ու առանց
պատճառի ջարդը, որուն վրայ քաղա-
քակրթ աշխարհի ուշադրութիւնը
կը հրաւիրուի,

«Մենք, Ամերիկեան քաղաքացիներս,
կ'որոշենք բողոքել լուսաւորութեան
ու յառաջդիմութեան զինանշանի
վրայ այդ արատին եւ ազգերու խա-
ղաղութեան այս բռնաբարոյսին
դէմ՝ որ կը գործուի ազգաւ ու ա-
րիւնաւորաւ բարբարոսներու ձեռքով,

«Կ'որոշենք նաեւ հաւաքաբար խնդ-
րել Ամերիկայի Միացեալ Նահանգ-
ներու Նախագահ թէոտոր Րուզվէլ-
թէն, որ վերջերս Ռուսո Ճարտնական
խաղաղութեան դաշնագրին մէջ դուրս
եկաւ իրեւ աշխարհի խաղաղաբարը,
որպէսզի Սթէյքի Տէփարթմէնթի միջո-
ցաւ ազգային բողոք մը բառնայ այս
խժոժութիւններուն շարունակութեա-
նը դէմ եւ Լա Հէյի յառաջիկայ խա-
ղաղութեան համաժողովին մէջ պա-
հանջէ մնալուն երաշխաւորութիւն
մը թէ այլ եւս պիտի չի կրկնուին
անոնք : »

Ասլան կը նեղուէր . այդ ցնդիկ ու
միանգամայն տիրացուական տրամախո-
սութիւնները չէր ուղեր լսել ... մե-
քենաբար ոտքի ելաւ ու ընմիջեց :

—Աւելի աղէկ է գործերնիս կարգա-
դրենք ... թողէ՛ք այդ ճակատագրական
վարդապետութիւնը :

—Ճշմարիտ կը խօսես, նկատել տո-
ւաւ վաշխառուն ու պայտուսակէն ե-
րեք հստ փոխանակագիր հանեց ու
զրաւ սեղանին վրայ : Հիմակ այս փո-
խանակագիրները վճարելի են վեց ամ-
սով : տասը ամսով ու մէկ տարիով :
Այնպէս որ երկուք ու կէս տարուան
ժամանակամիջոցին մէջ՝ յիսուսութիւն
լիբայի պարտքերնիդ՝ հարկերին տասը
տոկոսով՝ պիտի գանձուի իմ կ. Պոլսոյ
ներկայացուցիչին միջոցաւ : Ա՛յս է
օրէնքը : Ձը մոռնամ ըսելու թէ՛ որոշ-
եալ պայմանաժամը չը լրացած՝ իմ ներ-
կայացուցիչս միա՛յն անգամ մը լուր
տալու պարտական է ... հակառակ
պարագային մէջ՝ տասն եւ հինգ օր ա-
ռաջ կրնայ վերադարձուիլ ինձի որկտառ
վարութեանդ իմիւր ժամանակունենամ :

Ռէս Մուրատ վիզը ծռեց . ինչպէս
հլու անասուն մը՝ լուծին ծանրութեան
տակ . իսկ Ասլան ստորագրելու հա-
ւանութիւնը տուաւ եւ փոխանակագրին
մօտեցաւ : Արդարեւ երկր փոխանակա-
ցիւններն ալ ստորագրեցին հայրն ու
որդին եւ յետոյ մեկնեցան :
(Շարունակելի)

ՀԱՍ. ԲՈՒՋՎԵԼԹ ԵՒ ԶԵՅՄ ՊՐԱՅՍ

Հանունի մեծագոյն ազատական թերթը, «Թրիպիւն»-ը, մարտ 24 թուականով կը հաղորդէ թէ Տօթթ. Րէյ-նօլտս, Վանի Ամերիկեան միսիօնարը, որ այսօրեր Անգլիա կը գտնուի արձա-կուրդով, ըսած ըլլայ՝ թէ ողբալի թշուառութիւն կը տիրէ Հայոց մէջ։ Փրօֆ. Զէյմս Պրայս կը խորհի թէ նախագահ Բուզվելթ Մեծն Բրիտան-իոյ բարոյական աջակցութիւնը իր հետ պիտի ունենայ՝ եթէ նախաձեռ-նարկ ըլլայ բան մը ընել Հայոց օգ-նելու։

ՀԱՅ-ԱՄԵՐԻԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹԻՒՆ

Աւաշինկերէն մարտ 26 թուակիր հեռագիր մը հետեւեալը կը հաղորդէ.
«Արտաքին Գործոց նախարարու-թիւնը հրապարակ հանած է այսօր-կ. Պոլսոյ Ամերիկեան դեսպանէն ըս-տացուած հեռագիր մը, որուն համա-ձայն ա՛յլ ասկէ վերջ գործնականօրէն անկարելի է նախկին թուրք հպատակ-ներու համար թիւրքիա վերամտնել։
«Ներկայացուցիչ Լէյնմըն իր հեռա-գրերն մէջ կը հաստատէ թէ, անցեալ ամառ, Սուլթանի կեանքին վրայ ե-ղեռնափորձէն ի վեր, նախկին թուրք հպատակներու թուրքիա վերամու-տին դէմ օրէնքին կիրարկումը հետըզ-հետէ աւելի խստացած է, քանի որ թուրք պաշտօնեաներ կը հաւատան, թէ Հայ յեղափոխականներն ու անոնց համակերպողները պատասխանատու են այդ սպաննութեան փորձին։» Հետեւ-ւաբար՝ թուրքիոյ այն հպատակները, որոնք ուրիշ պետութեան մը հպատա-կութիւնն ընդունած են, կասկածանքով կը նայուին, եւ չեն կրնար թուրքիա վերադարձելու ժամանակաւոր արտօնու-թիւն անգամ առնել։

ԴԺԲԱՂԴ ՀԱՅԵՐՍ

Նիւթընի մէջ, Ապրիլ 17 ին, «Միս Ալիս Սթօն Պլաքուէլի կարգադրու-թեամբ՝ հայանպաստ միջինկ տեղի պի-տի ունենար Ամերիկացիներու կողմէ՝ ուր հրաւիրու-ծ էր խօսիլ «Արծիւի խմբագիր Պր. Տ. Մ. Արշակ։ Միս Ալիս Սթօն Պլաքուէլ մեզ կիմացէ թէ այդ ժողովը տեղի պիտի չունենայ, որովհետեւ յանկարծամահ եղած է Ա-մերիկացի հայասէր Մր. Լօվել, որուն տան մէջ պիտի գումարուէր այս ժո-ղովը։

Դժբա՛ղք հայերս ...

«ԶԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ»

ԱՐՏԱՔԱՍՈՒՄ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Սփրինկֆիլտ, Մէս — Միհրան կա-րապետեան անուն մարզանցի պատու-ւելիցութի մը քառութեամբ հրապարու-եան անուն երկու երիտասարդներ եր-կու շարժութեան համար արտաքսու-մի պատիժ ընդունեցին Անկոնիան Էն-թիւնաւիօնայ Գօլֆիմ էն։ Հայ աշա-կերտներու մեծամասնութիւնը տեղ-եակի հրապարուրեաններու անմեղու-թեան՝ քննութիւն պահանջեց, ինչ որ մերժուեցաւ։ Նոյն շարժութեան, ուրբաթ իրիկուն, վարժարանին նախագահը ի-րիկուան աղօթքէն ետք մատուաին մէջ վար դնել տուաւ հայ աշակերտնե-րը եւ անոնց «ըմբոստ» ոգին մեղմե-լու համար անշուշտ՝ սկսաւ պատմել մեզ թէ (1) հայերը ապերախա են, թէ-եւ միսիօնարներու եկամուտներուն հարկերին 35 հայերու համար կը վատ-նուի, (2) թէ Սփրինկֆիլտի վարժա-րանը մարդասիրտ կը պահէ հայ աշակերտներ, մինչդեռ ուրիշ վարժա-րաններ կը մերձեն, (3) իբր թէ Մու-տի անուն ամերիկացի մը 500 տուր

պիտի նուիրէ եղեր Սփրինկֆիլտի վարժարանին, բայց իմանալով որ հա-յեր կը գտնուին հոն, կտրեր է իր նւէրէն, (4) թէ հայերը զբաւ կը խոստանան երբ վարժարան կը մտնեն, բայց չեն վճարեր, եւն. եւն.։

Խնդիրը փոխուած էր այլ եւս, պարզ կարգապահութեան խնդրէն ել-լելով, մեր ազգային պատուին դպրոց հանգամանք մը կստանար եւ մենք անմիջապէս որոշեցինք ձգել դպրոցը։ Յաջորդ օրը ոչ դասարան մտանք, ոչ ալ ճաշարան, եւ երբ նախագահը իր տունը կանչեց մեզ պատճառները ի-մանալու ու հասկցաւ խնդիրը, ան-միջապէս փոխեց լեզուն, ուրացաւ իր ըսածները, ի գուր, մենք պիտի կե-ցանք մեր որոշումին վրայ, («) Նա-խագահը բարկանալով պահանջեց որ կիրակի օրը ժամը 9-էն առաջ հեռա-նանք վարժարանէն։ Օր մըն ալ մը-նացինք, մինչեւ մեր հաշիւները կարգադրեցին, ամէն մէկս 100-ական տալէր պարտական հանելով վարժա-րանին, իրենք միայն հասկցան թէ ինչ հաշիւ էր ատ։ Դուրս ելանք 10 հոգի, մնացին հոն 15 եւս, որոնց երեքը աղ-ջիկներ։ Եւ այս բոլոր խառնակու-թիւններուն պատճառ տուողը եղաւ վերոյիշեալ մարզանցին, միմիայն ա-նոր համար, որ վարչութեան աչքին ներկայանայ իբրեւ հոռւագուն պաշ-տօնեայ մը։

(Հայրենիք)

Ա. ԹԱՌՈՒԼ

(*) Դիտ. Խմբ. կը ցաւինք ձեր այդ պինդգլուխութեան վրայ։

ԻՄ ՊԱՏԱՍԻԱՆՍ

Առ Մեծարոյ Ուսուցչական Մարմին Ռուսչուգի Ազգա-յին Վարժարանին։

Ազնիւ Պաշտօնակիցներ,

Ամեն խղճամիտ ուսուցիչէ անշուշտ հաճոյքով ընդունուեցաւ Ուսուցչ. Մի-ութեան ի նպաստ տեղւոյդ ուսուցչ. մարմնոյդ դրկած չըջարեւական-նամա-կը։ Դուք, ազնիւ պաշտօնակիցներ, ամենէն գնահատելի առաջնութիւն ու-նեցաք Պուլկարահայ կրթական գոր-ծին հակազդող Ձեր այս ձեռնարկովը որով իրականութիւն կախում պիտի ու-նենայ թէ՛ Պուլկարահայ Ուսուցչու-թեան եւ թէ՛ անոր խնամքին յանձ-նուած դաստիարակուող սերնդին ներ-կան ու ապագան։

Պուլկարահայ ուսուցչութեան սեղա-նին վրայ զբաւ հարցը ինքնին շահե-կան ըլլալով, արժանի է մեր ամենուս հաւաքական խորհրդածութեանը եւ զայն ի գլուխ հանելու համար ի պա-հանջի հարկին մեր իւրաքանչիւրին անհատական զոհողութեան։

Այս կրնայ ըլլալ այժմէն ինձմէ խն-դրուած կարծիքը եւ գիտողութիւնը, եթէ ուսուցչական այս միութիւնը իր ներկայ սաղմնային վիճակին մէջ իրա-ւունքը ունենար անշուշտ գիտողութիւն մը իսկ վերցնելու։

Մեծ է հաւատքս թէ՛ Ուսուցչական այս միութիւնը օրհնութիւն մը պիտի ըլլայ Պուլկ. կրթական գործին եթէ ազնիւ պայտօնակիցներս իրենց ճգած հրաւերէն կատարելապէս օգտուել զիա-նան։ Ահա առիթը գործնականապէս դարձանելու Ուսուցչական գործող վի-ճակը եւ միանգամ ընդմիշտ մէջտեղէն վերցնելու այն մշտնջենական տրտու-նը որ կը գառնայ Պուլկ. վարժարան-ներու շուրջը։

Ժամանակն է փութացնելու մեր հա-

ւանութիւնը Ուսուցչական մարմնից եւ համոզուիլ թէ կրթիչի մեր պաշտօնին մէջ մեր վեհ ու ծանր պարտականու-թիւններէն մէկն ալ այս է։

Պորին Յարգանք
ԱՐԱՄ ՍԱՀԱԿԵԱՆ

3 Ապրիլ 1906
Թ. Փաղարճըզ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պողոս փաշա Նուպար Գահիրէի աղքատներուն բաժնեւում համար 400 եգիպտական ոսկի շրկեր է տեղւոյն Աղքատախնամ Ընկերու-թեան և Աղքատաց հոգաբարձու-թեան։ Իսկ 100 ոսկի շրկած է Միացեալ Որբախնամ Ընկերու-թեան։

—Հայանպաստ Գերմանական Ընկերութեան տնօրէնը Տօթ. Լեք-սիուս Գահիրէ գացած ըլլալով, տեղւոյն Ամերիկեան վարժարանի սրահին մէջ բանախօսած է գեր-մաներէն լեզուով և իր գործակից թարգմանը Պատ. Յ. Աւետարան-եան հայերէնի թարգմանած է։ Այս բանախօսութեան ներկայ գտ-նուած են 200ի չափ ունկնդիր-ներ, որոնց մէջ կան եղեր հայ ժողովականներ ու վեհաժողովներ։ Տօթ. Լեքսիուս գլխաւորապէս Հայ ազգի մասին խօսած է. ինք գը-րեթէ միակ Գերմանացիին է՝ որ հայ թշուառացեալներուն նպաս-տելու համար ծանր աշխատու-թիւններ թափած է հիմնելու հայանպաստ գերման ընկե-րութիւն մը, որ տասը տարի է իվեր կը գործէ և ցարդ հինգ միլիոն մարք հաւաքած է ի նը-պաստ հայ թշուառներու, և մինչ-չեւ հիմայ կը պահէ չորս մեծ Որ-բանոց—Արհեստանոցներ թուր-քիոյ և Պարսկաստանի մէջ, Տօթ. Ն. Տաղաւարեան Լեքսիուսի բա-նախօսութեան ներկայ գտնուե-լով, յանուն հայ ազգին շնորհա-կալութիւն յայտնած է գերման մարդասէրներուն։

—Վառնայի Աղքատախնամը Ս. Զատիկ առթիւ իրեն ծանօթ աղքատներու տունները պտըտե-լով, հաւկիթ և դրամ բաժնած է։

—Ամերիկայի Սէնթ Լուիզ քա-ղաքին մէջ հրապարակային ժո-ղով մը գումարելով 510 տուար (2550 ֆր.) հաւաքած ու շրկած են կողկասի արկածեալներուն, Ա. Մ. Աղարեանցի հասցէով, որ Տիգրիսի նպաստամատոյց յանձնա-խումբին գանձապետն է։

Փորովիտէնսի մէջ նոյն նպա-տակաւ ձեռնարկուած հանգանա-կութեան գումարը 1200 տուարի կը հասնի. Թերթերը կը գան-դատին այն մաս մը անզգայ հա-յերուն զէմ, որոնց բերնին մէջ որքան ալ «Բրիտանիէութիւն» «Եղբայրութիւն» և ասոնց նման

բաւեր պլպլան, կըսէ Հայրենիք, անոնք իրականութեան մէջ Աւե-տարանի իսկական փարիսեցիներ են։

—Յիլիպէի Տէր Տաճատ քահա-նան խնդրած է Պատրիարքարանէ որ իրեն պաշտօն տրուի Պուլկա-րիայէ դուրս։

—Պոլսոյ թերթերուն մէջ ցաւ ի սիրտ կը կարգանք թէ Գալուստ Անդրէասեան գրական ու կրթա-կան մշակը 38 տարեկան երիտա-սարդ հասակի մէջ իր մահկանա-ցուն կնքած ի Մուշի։

—Պուրսայի նախկին առաջնորդ Բարթուղիմէոս չարքայիսկոպոսը՝ որ իր թրքասիրութեամբ և ան-բարոյականութեամբ հռչակ հա-նաձ էր, մեռեր է Պոլսոյ մէջ 68 տարեկան։

ՊԱՐՍԿԱՀԱՅԻ

Ուրմի 5 մարտ 1906

... Խմբագիր Խաւուրմի

«Մկրտիչ Աւետիսեան» Գրադարան-Ընթերցարանս բացուած է 905 թիւ օգոստոս 1 ին, որոյ նպատակն է ազգել հայ հասարակութեան բարոյա-պէս եւ մտաւորապէս։

Գրադարանս իր անդրանիկ հանդէ-սը ներկայացուց 1906 թիւ փետր. 5 ի կիրակին, որտեղ յաճախեցին խառն երկսեռ բազմութիւն. հանդէսը շատ յաջող եւ տպաւորիչ անցաւ։

Կը խնդրուի իւրաքանչիւր անհատից իրենց նուէրներով օգնեն մեր նո-րահաստատ եւ աղքատիկ Գրադարան-Ընթերցարանին։

Շնորհակալութեամբ ստացանք.

Թաւրիզից Պ. Ներսէս Գրիգորեանի միջոցաւ	90 հատոր
Եգիպտոսից Պ. Յարու-	
թիւն Թուրքիանից	9 » »
Ուրմիցի հայ հասարա-	
կութիւնից	200 » »
Սալմասից	50 » »
	349

Նիւթական նուէրներ ստացած 200 դրան, 2 օրինակ «Արաքս» շաբաթա-թերթ նուէր եւ 1 օրինակ «Մշակ»։

Վարչութիւն

«ՆՈՐ-ԴԱՐ»

Օրաթերթ Գաղտնական, գրական

Բաժնեգինը արտասահմանի համար տարեկան 40 ֆր. փոխադրուած 25 ֆր. Հասցէ՝ Խմբագրութիւն «ՆՈՐ-ԴԱՐ» (Կովկաս) Թիֆլիս

«ԱՐՇԱԼՈՅՍ»


Գրական, հասարակական, քաղաքական

Օրաթերթ

Բաժանորդագին օտար երկիրներ 35 ֆր. Հասցէ՝ Խմբագրութիւն «ԱՐՇԱԼՈՅՍ» ի

(Կովկաս)

Թիֆլիս



ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐՔԻԱ

Միլիթարիզմը իր թիւրքերէն զըրաթ նազըրը մուսուլմանի Սինապեան անկիւնէն պէրաի՝ մէ-մուրիյէթ Մըսըրա վէ օրատան Բարիզէ կիթմիշ իտի Սթան-պուլտան պաթէլէկրաֆ իքի տէֆա կէրի կէլմէք իչիւն էմիր վէրիմիշ ֆազաթ Սինապեան խասթալըզընը թէտալի իթտիր-մէք սէպէպի իլէ տէրհալ ալ տէթ իտէմէյէճէկիւնի Սաորապա-մա պիլտիրիմիշ տիր։ Սինապեա-նըն պու իթաւթսըզըզը իւզէ-րինէ անըն Ֆրանսատան թարտ իտիլմէսիի Պապը Ալի թալէպ իթմիշ վէ բուլթպէ վէ մէմուրի-յէթմէն իսգաթ էլլէմիշ տիր։

— Սթանպուլ — Թիւրքիա վէ Աճէմիստան պէյնիստէքի իթմի-լաֆ ազրըլաչիօր (?) Աճէմ հիւ-քիւմէթի թիւրքիա վէ երլտըզ քէօշկիւ իլէ միւնսաթպաթը քէ-սէճէկիւնէ տալիօր օլան շալէաթը աճէմ էլլիսի թէքիպ իտէյօր։

— Արնաւուլուար թէքրար հա-չարաթա տէվաթ իտուպ, պիր թագըմ խրիսթիան էվլէրի խա-րապ իթմիշէր։ Սըրպ քէօյլիւ-լէր Արնաւուլուարին հիւճուրն-տան գօրպարագ քէօլէրիի պը-րագուպ գաշմըլար։

— Պիր ալման կազէթսընըն էյի եէրտէն ալտըզը մալիւմաթա կէօրէ, Պուլկարիանըն վիւքէլա-րէյիսի Պուլկարիայա գըրալըզ վէրիմէսի իչիւն, Վիէննատան պաշլալարագ էվրոպա բաթիթաթ-լարընը կէզէճէք իմիշ։

— Պիր պուլկար չէթասը (32 քիշի) Մէլնիք թարաֆլարընտա թիւրք ասքէրլէրիստէն քիւլի-էն մահլ օլտըզընը պուլկար կա-զէթալարը եազիյօրար։

— Թրապուլուստան Սթանպուլ պիլտիրիլիսի իւզրէ, օրալա սիւր կիւն օլան Քիւրտ Պէտրհանլըլա-րա հիւքիւմէթ մէմուրլարը քէք ֆէնա մուսալէլէ իթմէքտէ իմիշ-լէր։

— Հէր նէգատար Եռնան հիւ-քիւմէթի սինօրտան բոււ չէթա-լարըն թիւրքիայա կէլմէլէրինէ միւսատէ իթմէյէճէկիւնի վաթ իթ-տի իսէտէ, տէնիզտէն եէլքէն-լէրլէ Բոււ հալտուարը վէ բաթրիթլարը թիւրք սահլիւ-րինէ չըգուպ էվլէլէրի կիպի չէ-թալըլէ կէզմէքտէ օլտըզլարը Սթանպուլտան Վու ծայրունի ա պիլտիրիլիօր, Պազաթ մէզքիւր գօրիթալարըն տուլտուլիսի տէ-նիզտէն մէնի իթմէք իչիւն պահ-րիէ նազըրը 3 վարօր կէօնտէր-միշ։

— Քիւրտիստանտա Քիւրտէրին ալալանլուսը սէպէպիլէլգօրլուզը պու սըրա արթըրմաթ իչիւն՝

Պապը Ալի Աճէմիստան իլէ օլան սինօր մէսէլէսիի թաթլըլա պազ-լաճագ իսթէր իմիշ։

ՐՈՒՍԻԱ

Տոււանըն ինթիսապաթը նէ-թիճէսի օլարագ 167 մէպուս ին-թիսապ օլընմըլ տըր պուլա-րըն 26 սը հիւքիւմէթ թարաֆ-տարը, 78 ի գօնթիթիսիօնէլ-դէ-մօկրատ, 20 սի սօսիալիսթ, 14 ք հոկտեմբեր քարթիսի, 3 ի գօն սէրվաթօր վէ 25 ի միւսթագիլլ (անկալ)։ Պու 167 մէպուսար մի-լիյէթ ճիհէթիսիսէ չէօյլէ թագ-սիմ օլընըրլար ըմըլ 147 սի Բուս 5 ի Եահուտի, 7 սի Բօլաք, 6 սը Թաթար։

Մ. Վիթթէ Տոււա ազալարընըն էքսէրիսի քէնտիսիսէ վէ հիւ-քիւմէթի հազրէյէ մուխալիֆ Քըրգալարա մէնսուպ օլալարը-նը կէօրէքէք իսթիֆասընը վէր-միշ իսէտէ, Ձարտան գապուլ օ-լընմալըլ տըր։

Շիմտիլիք եէնի իսթիգրազ ֆրանսըզ պանգէրլէրիստէն իմ-զալանմաթըճա հէյէթի վիւքէ-լա տէկիչիլմէյէճէք կէօրիւնիյօր էճնէպի պանգէրլէր իսէ Տոււա-նըն թէլքիլ վէ թէճէմիւսիս-տէն էվլէլ բարա վէրմէկէ րազի օլմայօրլար, զիրա էմիլիէթ իթ-մէյօրլար ֆազաթ Ֆրանսա հիւ-քիւմէթի Ձարըն Բարիզէ կէօն-տէրմիշ օլտըզը մուրախալարա սուհուլէթ վէրմէքտէ տիր։ Բու-սիանըն լիպէրալ Ֆըրգալարը ֆրանսըզ հիւքիւմէթիսիս պու հարէքէթիսի Բուսիայա տիւչ-մանլըգ աթո իտէյօրլար, չիւնքի Բուս հիւքիւմէթի բարա էլէ կէ-չիւրիկի կիպի Տոււայըլազլ ի-տէր տէյու չիւքէ վար տըր։

ԻՆԿԻԼԻԹԻՐԱ

Ինկիլիզ տէվլէթի Մըսըրտա ասքէրիսի շու սըրա արթըրմաթ-տա տըր։ Պու թէտպիր թիւրքիա իլէ Մըսըր պէյնիստէ զուհուր իթմիշ օլան սինօր մէսէլէսիստէն տօլալը օլմալը տըր։

— Լօնտրատան եազըլտըզը իւզ-րէ, Ֆրանսա վէ Ինկիլիթէրա պէյ-նիստէ պուլընան Մանշ տէնիզի ալթընտա թիւնէլ եաթաթ թա-սալվուրընը ֆիլիէ չըգարմագ իչիւն միւսատէ վէրիմէսիսի եա-գընտա Բարլըմանա թէքիլի օ-լընաճագըմըլ, էկէր մէճիւս րա-զի օլուր իսէ, կէլէճէք սէնէ թիւնէլին բլանը վէ խարիթէլէ-րի Բարլըմանա թէպիլի օլընա-ճագ։ Իչպու թիւնէլէ 150,000 000 սարֆ օլընաճագը թահմին օլը-նիյօր, պու ճէսիմ մէպալըրն եա-ըսը Ֆրանսատան վէ եարսը Ինկիլիթէրատան թէտարիգ օլը-նաճագ տըր։

ՊՈԻԼԿԱՐԻԱ

Պիր գաշ կիւն էվլէլ Սօֆիայա կէլմիշ օլան իքի քիշի մահէլլէ-տէ պիր օտա թուլթուլ վէ բօլի-սիայա մալիւմաթ վէրմէմիշ օլ-մալարը սէպէպիլէ (!) բօլիսլէր ան-լէրի թուլթուլ թէվգըֆ իթմիշ լէր վէ խանէտէ իճրա օլընան թահգիթաթտան անալըլմըլքի մէզքիւր իքի շախ անարշիսթ իմիլլէր։ Բուս գօնսօլսընըն միւ-տալսէլէսի իլէ օնլար Վարնա թա-րիգի իլէ Օտեսայա կէնտէրիմիշ տիրլէր։

Վալյ հալլէրինէ։
— Իւլ Ֆրանսըզ սէրմայէտար-լար զըրաթ վէ թիճարէթ մի-նիսթէրինէ միւրաճաթլէ կիւլ եազը չըգարմագ իչիւն իմթիագ իսթէմիլլէր պու Ֆրանսըզլարըն Գալլօլա գազաթընտա պու իչ ի-չիւն ֆապրիգալարը տալի վար ըմըլ։

ԵՈՒՆԱՆԻՍՏԱՆ

Եռնան հիւքիւմէթի սինօրտան թիւրքիայա հիւ պիր Բոււ չէ-թասը կէչիւրմէյէճէկիւնի պիր նօ-թա իլէ Պապը Ալիյէ պէյան իթմիշ տիր։

Եռնանիստանըն պու թէմիւն-թընա պիզտէ ինանալըմ մը։

— Կէչէն հաֆթա պիր Եռնան վարօրը իլէ չէհրիմիդտէն խալը քիշիլէր Եռնանիստանա միւթէ-վէտճիհէն հարէքէթ իթտիլէր։ պու զաթլար Ալթիստա պու կիւն-լէրտէ հէր սէնէ իճրա օլընան Օլիմպիա օյուսլարը թէմաչա իթ-մէք իչիւն կիթտիլէր։

— Ինկիլիզ գրալը վէ գրալի-ցասը տալի Օլիմպիա օյուսլա-րընտա հազըր պուլընագ իչիւն Եռնանիսթաթտա տըրլար։

Սուլթան Ինկիլիզ գրալընըն լլթիսայա կիտէճէկիւնի տուլմա-սընտան պէրու պիր գաշ տէֆա-լար անը Սթանպուլ տալէթ իթ-տի վէ էլան օլ զալլէթտէ իսէ-տէ գրալըն հիւ պիր Եօլլէ Սթան-պուլա կէլմէյէճէկի պիլտիրիլի օլմալլէ թիւրքլէրտէ պէօյիլ կըրկընլըգ հըս օլընիյօր։

ՐՈՒՄԱՆԻԱ ՎԷ ԵՈՒՆԱՆԻՍՏԱՆ

Ալկէմանի ծայրունի եազիյօր քի Բոււմանիա հիւքիւմէթի օրատա պուլընան Բոււլարա գարըլ եաթ-տըզը գանուլնալէլի լազլ իտէ-ճէք վէ քէզա Բոււ բաթրիգիւսա-նէսիսի թիւրքիատա Ուլալարը ալըլ միլլէթ տէյիւ թաստիգ իթմէսի իչիւն իտտաա իթմէքտէն Բոււմանիա վազ կէչէճէք իմիշ։

Պազաթ պուլնարա մուգապիլ Բոււլար նէ՝ եաթաճագլար...։

ՄԻԻԹԵՆԷՎՎԻԷ

Նիւ-Եօրթտան ապրիլ 7 թա-րիլէ իչար օլընտըզ իւզրէ Սան

Ֆրանչիսքօտա պիր չիտտէթլի զէրզէլէ օլուպ, չօք խանէլէք եը-գըլմըլ վէ ատաւլար թէլէֆ օլ-մուշ տըր։ քէզա 3 սաաթ սն-րա պիր իքիւնի սարսըլըլ տալի վուգու պուլարագ չօք պէօյիլ կիւնալար եըգմըլ, վէ պու եը-գըլըլտան աթէլ զուհուր իտուպ էթրաֆա տաղըլմըլ էլէքթրիք-էր, հալա կազալարըն պօրուլարը վէ թէլէկրաֆլար պօզուլմուշ տըր։

— Սանֆրանչիսքօ էհալիսին-տէն 200,000 քիշի չատըրլար ալթընտա եաթմագտա ըմըլլար ինսան թէլէֆիաթը պինլէրճէ հէսապ օլընիյօր։ Եռնան մահէլ-լէրտէ պալըլ օլան ինկիլէր ա-թէլտէն գաչմագ իչիւն գուտուր-մուշ կիպի գաշընմայա պաշար-լար վէ 12 քիշի էօլտիւրիւրլէր։

Ձապիթլէր գըլըմ վէ րէվօլ-վէրլէ, ասքէրլէր սիւնկիւլէրլէ էհալիէ եարտըմա, ինսան գուր-թարմայա վէ եանկընը սէօյիւն-տիւրմէյէ իլէրի սիւրէրլէր իմիշ։ Ձէրզէլէ վէ եանկըն պիր զէման-տա վուգու պուլտըզը իչիւն տէհ-չէթ վէ խասարաթ ֆէվգէլատէ օլմուշ տըր։

— Շանկատան Լօնտրայա պիլ-տիրիլիկի իւզրէ, թիպէթտէ ըսիւն զուհուր իթմիշ։ Ձիւլի-լէր ալթ օլմուշլար։

ԹԻԻՃԱՐԻԷ

Ձալիսիէ վէ պագալիլէ մալէ-րին ֆիաթլարը թէպէտիւլաթ պուլմալըլ տըր։ Եռնի կէչէն ճոււա էրթէսի կիւնքի նօլէրօ-մըլտա կէօսթէրիլէն ֆիլաթլա-րըն ալնը տըր։

Եռնուրթա 100 ատէտի 4.50

ԻԼԱՆ

Վարնա-Տօպրիշ Եօլու իւզէրիստէ Աճէմլէր քէօյիւնտէ, միւթէվէֆա Ներ-սէս կ. Գարագաչիանը խանը սաթը-լիյօր։ Ալմայա արգոլ քէլ օլանլար Վարնատա Հաճօլեան պիւրտէրլէրէ միւրաճաթ իթմէլ տիրլէր։

ԸՆՏԻՐ ՔԱՅԱՆ

Ձուտ խաղողէ պատրաստուած քնա-կան քաղախ նորահաստա մեր միւն-րանցը առիթ կընծայէ յարգոյ հասա-րակութեան որ ասկէ յետոյ գերմ մը-նայ խարգօխեալ այլ եւ այլ զեղերով պատրաստուած կեղծ քաղախներու վը-նաներէն։ Մեր քաղախն անարատու-թիւնը եւ ազգութիւնը ամեն երաշ-խիք կընծայէ իւր առողջութեան նա-խանձանդիր յաճախորդին, որ անգամ մը փորձելով արդէն հաստատած պիտի ըլլայ գերազանցութիւնը։

Դուրսէն մեծաքանակ յանձնարարու-թիւնք փութով կը գործադրուին ի հարկին նմոյշ զրկելով։

Հասցէ՝ ԱՐՄԵՆԱԿ ԳԱՍԱՊԵԱՆ

Դ. Թաղ փողոց Գօլօնթիւ 65 ՎԱՌՆԱ

Одговорникъ А. Курбетянъ
напечатанъ въ Тифлисе въ С.-но-Варна